

ԴՎՔ	Դրամավարկային քաղաքականություն
ԵԿԲ	Եվրոպական Կենտրոնական բանկ
ԿԲ	Կենտրոնական բանկ
ԴՊՀ (ՖՊՀ)	Դաշնային (Ֆեդերալ) պահուստային համակարգ
ՍԳԻ, ԱԱԳ	Սպառողական գների ինդեքս, Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
MoM	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ ամսվա նույն ցուցանիշը
YoY	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է բազիսային հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ տարվա նույն ցուցանիշը
QoQ	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ եռամսյակի նույն ցուցանիշը
WoW	Որպես ցուցանիշի հիմք վերցվում է նախորդ շաբաթը
K	Հազար, ամերիկյան գրեյաձև
B	Միլիարդ, ամերիկյան գրեյաձև
PMI	Purchasing Managers' Index. ինդեքս է, որ ստացվում է տվյալ ոլորտում ներգրավված մասնագետների շրջանում անցկացված հարցումների հիման վրա, բնութագրում է տվյալ ոլորտում պահանջարկը, գործարար պայմանները, աճի միտումները
Core (բազային)	Ցուցիչ, որը ցույց է տալիս, որ տվյալ ինդեքսը հաշվարկվել է առանց հաշվի առնելու որոշ սեզոնային մեծ տարանջատում ունեցող բաղադրիչներ

Օգտագործված աղբյուրներ

- ՀՀ տնտեսական ցուցանիշների տվյալների համար որպես աղբյուր օգտագործվել են ՀՀ Կենտրոնական Բանկի, Ազգային Վիճակագրական ծառայության, Ֆինանսների նախարարության, Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի, Համաշխարհային Բանկի և Արժույթի Միջազգային Հիմնադրամի վիճակագրական բազաները, հրապարակումները և հաշվետվությունները,
- Արտաքին հատվածի տվյալների աղբյուրների համար տրված են բոլոր անհրաժեշտ հղումները

Ռիսկերի մասին նախազգուշացում

Սույն վերլուծական հաշվետվությունը պատրաստված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից և կարող է օգտագործվել միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկատվություն: Վերլուծական հաշվետվությունը հիմնված է ներկայումս հասանելի հանրային տեղեկատվության վրա, որը ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն համարում է վստահելի: Սակայն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի երաշխիք չի կարող տալ, որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ արժեթուղթ, օպցիոն, ֆյուչերս կամ ցանկացած այլ ֆինանսական գործիք գնելու կամ վաճառելու վերաբերյալ: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի պատասխանատվություն չի կրում այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր վնասների համար, որոնք առաջացել են սույն հաշվետվության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:


Կոնտակտային տվյալներ՝

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
ՀՀ, քաղաք Երևան, Պուշկինի 19
Վերլուծաբաններ՝ Թ.Սարգսյան, Ա.Մաթասյան
(010) 591 525, (010) 591 526

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

- 2018թ փետրվարին ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշը նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշի նկատմամբ գրանցել է 7.3% (YoY) աճ: Աճ է գրանցվել ՀՀ տնտեսության բոլոր ոլորտներում, իսկ շինարարության ոլորտում դիտվել է վերջին տարիների առավելագույն ցուցանիշը՝ 25.1% (YoY) աճ:
- Ներքին առևտրաշրջանառությունն աճել է 17.6%-ով՝ կազմելով 201.7 մլրդ դրամ, արդյունաբերության ոլորտում աճը կազմել է 3.3%՝ թողարկված արտադրանքի ծավալը կազմելով 126.4 մլրդ դրամ: Ծառայությունների ծավալն աճել է 15.4%-ով (YoY)՝ կազմելով 114.2 մլրդ դրամ:
- 0.2% (YoY) աճ է արձանագրվել գյուղատնտեսության ոլորտում՝ թողարկված արտադրանքի ծավալը կազմելով 27.8 մլրդ դրամ:



- Հունվար-փետրվարին ՀՀ-ում իրականացվել է 21.6 մլրդ դրամ ծավալով շինարարություն՝ ոլորտում գրանցված աճը կազմելով 22.7% (YoY): Շինարարության ընդհանուր ծավալի 13.5%-ն իրականացվել է միջազգային վարկերի (Համաշխարհային բանկից, Եվրոպական ներդրումային բանկից, Ասիական զարգացման բանկից, ՌԴ-ից), 61.2%-ն այլ կազմակերպությունների հաշվին, իսկ մնացած 25.3%-ը՝ բնակչության միջոցների, պետական և համայնքային բյուջեների հաշվին: Կազմակերպությունների միջոցների


կազմում 17.6%-ը կազմել են օտարերկրյա ներդրողների միջոցները՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 2.6 անգամ: Միջազգային վարկերի աճը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 12.4% (YoY):

- Ըստ ոլորտների դիտարկելու դեպքում՝ 2018թ հունվար-փետրվարին շինարարական աշխատանքների 26.3%-ը կատարվել է անշարժ գույքի հետ կապված գործունեության, 14.4%-ը՝ էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման, 10.8%-ը տրանսպորտի, իսկ 4.9%-ը հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտներում:

Գնային միջավայր

- 2018թ հունվարին գրանցված 2.7% տարեկան գնաճին փետրվարին հաջորդեց 3.3% գնաճ (YoY), այդ թվում, սննդամթերքինը (ներառյալ ոչ ալկոհոլային և ալկոհոլային խմիչք, ծխախոտ)՝ 4.0%, ոչ պարենային ապրանքներինը՝ 4.6%, ծառայությունների սակագներինը՝ 1.6%:

- Մարտ ամսին տարեկան գնաճն ավելացել է մինչև 3.7% (YoY): Այդ թվում, սննդամթերքի գները (ներառյալ ոչ ալկոհոլային և ալկոհոլային խմիչք, ծխախոտ) աճել են 4.6%-ով, ոչ պարենային ապրանքներինը՝ 5.0%-ով, ծառայությունների սակագները՝ 1.8%-ով:




- Փետրվար ամսվա նկատմամբ գրանցվել է 0.1% (MoM) գնաճ: Ինչը հիմնականում պայմանավորվել է ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների 0.3% հավելաճով: Սննդամթերքի (ներառյալ ոչ ալկոհոլային և ալկոհոլային խմիչք, ծխախոտ) գները նշված ժամանակահատվածում նվազել են 0.1%-ով (MoM):

- Նշենք, որ ԵԱՏՄ անդամակցությամբ պայմանավորված նախատեսվում է մաքսատուրքերի դրույքաչափերի փոփոխություն, ինչի արդյունքում կգրանցվի սպառողական զամբյուղի շուրջ 30 անուն ապրանքատեսակների մասով մաքսատուրքերի դրույքաչափերի աճ, որի ազդեցությունը գնաճի վրա 2018թ առաջին եռամսյակում գնահատվում է՝ 0.4 տոկոսային կետ, իսկ տարվա կտրվածքով ակնկալվող ընդհանուր ուղղակի ազդեցությունը գնահատվում է 0.92 տոկոսային կետ:

- Մարտ ամսվա համար ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից սահմանափակ քանակությամբ ապրանքներից բաղկացած զամբյուղի գծով հաշվարկվող գնաճը կազմել է 2.3% (YoY):


ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

- 2018թ փետրվարին ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են 93.9 մլրդ դրամ, ծախսերը՝ 100.9 մլրդ դրամ:
- ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը կազմել է 6.9 մլրդ դրամ:
- 2018թ ցուցանիշները ՀՀ ԱՎԾ կողմից ներկայացվում են համաձայն 2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ և 456-րդ հոդվածների, ըստ որի՝ «Հարկեր և տուրքեր» ցուցանիշում առանձնացվել է «Հարկերի անցումային գերավճար» ցուցանիշը: Հաշվի առնելով, որ ՀՀ պետական բյուջեի եկամուտների մասով ցուցանիշները համադրելի չեն նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի ցուցանիշների հետ՝ աճի տեմպեր չեն հաշվարկվել:



- ՀՀ պետական պարտքն 2018թ փետրվարին կազմել է 5.56 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը 2017թ նույն ամսվա արժեքը գերազանցում է 14.9%-ով (YoY): Հուլիսյան արժեքից, սակայն, գրանցվել է շուրջ 0.7%-ով նվազում (MoM):
- Միայն արտաքին պարտքը փետրվարի 28-ի դրությամբ կազմել է 5.57 մլրդ ԱՄՆ դոլար՝ ավելանալով տարեկան 15.2%-ով (YoY): Ներքին պարտքն, իր հերթին, նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ ավելացել է 10.5%-ով (YoY)՝ կազմելով 1.29 մլրդ ԱՄՆ դոլար:


- Հաշվի առնելով ՀՀ մշտական բնակչության թվաքանակը՝ բնակչության մեկ շնչի հաշվով պարտքը կազմում է 2,296.8 ԱՄՆ դոլար (2017թ երրորդ քառորդի տվյալներով ՀՀ մշտական բնակչության թվաքանակը կազմում է 2,982,900 մարդ):



ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

Արտաքին առևտուր

- 2018թ փետրվարին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը կազմել է 592.8 մլն ԱՄՆ դոլար՝ տարեկան կտրվածքով աճելով 39.4%-ով (YoY): Առևտրաշրջանառության կազմում արտահանման ծավալների աճը կազմել է 37.7%՝ հասնելով 210.2 մլն դոլարի, իսկ ներմուծման ծավալներն աճել են 40.4%-ով (YoY)՝ մինչև 382.6 մլն ԱՄՆ դոլար:




- 2018թ հունվարի նկատմամբ փետրվարին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ցուցանիշն աճել է 17.2%-ով (MoM): Արտահանման ծավալներն աճել են 19%-ով, իսկ ներմուծման ծավալները՝ 16.3%-ով (MoM):

- ՀՀ արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը փետրվարին 2017թ փետրվարի համեմատ խորացել է 43.8%-ով՝ մինչև -172.4 մլն ԱՄՆ դոլար:

Դրամական հոսքեր


- 2018թ փետրվարին դրամական միջոցների զուտ ներհոսքը ՀՀ նախորդ տարվա փետրվարի նկատմամբ կրճատվել է ավելի քան կրկնակի՝ կազմելով 20.3 մլն ԱՄՆ դոլար:
- Նախորդ ամսվա նկատմամբ դրամական միջոցների զուտ ներհոսքը ՀՀ աճել է շուրջ 35%-ով:
- ՌԴ-ից ստացվող դրամական փոխանցումները փետրվարին հունվարի նկատմամբ ավելացել են 63%-ով, մինչդեռ դեպի ԱՄՆ զուտ արտահոսքը՝ 5.6 անգամ:



ՀՀ դրամական միջոցների զուտ ներհոսք, կառուցվածք ըստ երկրների, մլն ԱՄՆ դոլար					
	Դեկտեմբեր 2017թ	Հունվար 2018թ	Փետրվար 2018թ	%, MoM	%, YoY
Զուտ ներհոսք	79.5	20.3	27.3	34.6	-21.4
այդ թվում՝					
ՌԴ	80.6	23.5	38.2	63.1	6.7
ԱՄՆ	(8.5)	(1.2)	(6.9)	5.6 անգ	-20.1


ՖԻՆԱՆՍԱԿԱՆ և ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

- 2018թ փետրվարին ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված դրամային վարկերի ծավալները նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշի նկատմամբ ավելացել են 15.7%-ով, արտարժույթայինը՝ 9.4%-ով (YoY), իսկ ավանդներինը համապատասխանաբար 16.9% և 3.4%-ով (YoY):
- Ինչ վերաբերում է տոկոսադրույքներին, ապա դրամով վարկերի միջին տոկոսադրույքը 2017թ փետրվարի նկատմամբ 2018թ փետրվարին նվազել է 2.7 կետով՝ մինչև 13.8% մակարդակը, արտարժույթային վարկերինը՝ 0.3 կետով՝ մինչև 9.3%, դրամային ավանդների տոկոսադրույքների միջին մակարդակը նախորդ տարվա փետրվարի 11%-ից 2018թ փետրվարին նվազել է մինչև 9.3%, իսկ արտարժույթայիններինը՝ 5%-ից մինչև 3.7%:



- Տոկոսադրույքների նվազման հիմքում ՀՀ ԿԲ կողմից պահպանվող խթանող դրամավարկային քաղաքականությունն է, որը պահպանվել է ողջ 2017թ ընթացքում և այժմ, և որի ազդեցության լազային էֆեկտը կզգացվի 2018թ առաջին կեսին:
- ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի կազմում 61.4%-ը բաժին է ընկնում արտարժույթային վարկերին:


- Վարկավորման կազմում առավելագույն տեսակարար կշիռն ունեն սպառողական վարկերը՝ 539.7 մլրդ դրամ (22.4%), որոնց 81%-ը դրամային վարկերն են: Երկրորդ տեղում արդյունաբերության ոլորտն է՝ 476 մլրդ դրամ (19.8%), որի 83%-ը կազմում են արտարժույթով վարկերը, երրորդ տեղում առևտուրն է՝ 406.8 մլրդ դրամ կամ վարկերի



16.9%-ը: Առևտրի ոլորտին տրամադրված վարկերի 84.2%-ն արտարժույթային վարկեր են:

ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերն ըստ ոլորտների, 2018թ փետրվար, մլն ՀՀ դրամ						
	ՀՀ դրամով	% ընդամենից	Արտարժույթով	% ընդամենից	Ընդամենը	%
Արդյունաբերություն	80,250	16.9	395,784	83.1	476,034	19.8
Գյուղատնտեսություն	57,374	42.3	78,407	57.7	135,782	5.6
Շինարարություն	24,702	18.0	112,341	82.0	137,043	5.7
Տրանսպորտ և կապ	13,898	19.6	57,105	80.4	71,003	3.0
Առևտուր	64,362	15.8	342,471	84.2	406,833	16.9
Սպասարկման ոլորտ	46,270	20.8	176,384	79.2	222,655	9.3
Սպառողական վարկեր	436,983	81.0	102,728	19.0	539,711	22.4
Հիփոթեքային վարկեր	111,873	53.9	95,591	46.1	207,464	8.6
Այլ	92,424	44.0	117,531	56.0	209,956	8.7
Ընդամենը	928,136	38.6	1,478,343	61.4	2,406,479	100.0

- Պետական պարտատոմսերի շուկայում պահպանվում է եկամտաբերությունների նվազման միտումը: Նախորդ տարվա սկզբին առկա դրության հետ համեմատած 2018թ սկզբին պետական պարտատոմսերի եկամտաբերությունները նվազել են կորի միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱ

ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱ


Մարտ ամսվա ընթացքում ֆինանսական շուկաների վրա զգալի ազդեցություն գործեց աշխարհի երկու խոշորագույն տնտեսությամբ երկրների՝ ԱՄՆ և Չինաստանի միջև լարվածության աճը: ԱՄՆ նախագահ Դ. Թրամփի կողմից Չինաստանից ներմուծվող ավելի քան 120 տեսակի, ընդհանուր մոտ 50 մլրդ ԱՄՆ դոլար ծավալով ապրանքների վրա 25% մաքսատուրքի սահմանումը և Չինաստանի կողմից որպես հակաքայլ՝ նախ 3մլրդ, ապա ևս մոտ 50 մլրդ ԱՄՆ դոլար ծավալով ամերիկյան ապրանքների համար 25% մաքսատուրքի սահմանումը դարձան ֆինանսական շուկայի կտրուկ տատանումների պատճառ: ԱՄՆ հայտարարեց, որ նման քայլն ուղղված է Չինաստանի հետ ապրանքային առևտրի դեֆիցիտի կրճատմանը (մոտ 375.5 մլրդ ԱՄՆ դոլար): ԱՄՆ ընդհանուր ներմուծման ծավալներն 2017թ. կազմել են մոտ 4,7 տրլն ԱՄՆ դոլար, որից 505,6 մլրդ-ը կամ 10.8%-ը՝ Չինաստանից:

Նման ռիսկային պայմաններում կտրուկ անկումներ գրանցվեցին ֆոնդային շուկաներում, ԱՄՆ դոլարը սկսեց թուլացնել դիրքերն, իսկ ոչ ռիսկային ակտիվների նկատմամբ պահանջարկի աճը հանգեցրեց ոսկու գնի աճին:

Չնայած, որ ԱՄՆ մակրոտնտեսական ցուցանիշներն առավելապես խոսում են երկրում դրական տեղաշարժերի մասին, այնուամենայնիվ, ստեղծված լարված իրավիճակում ԱՄՆ դոլարի ինդեքսը մարտ ամսվա ընթացքում գրանցեց մոտ 0.82% անկում՝ մարտի 31-ին փակվելով 89.81 արժեքում:

2018թ. ,մարտ

Արժույթ/ապրանք	31.03.2018թ.	Փոփոխությունը ամսվա սկզբից
<i>EUR/USD</i>	1,2323	1,06%
<i>GBP/USD</i>	1,4018	1,87%
<i>USD/RUB</i>	57,1444	1,45%
<i>Ոսկի</i>	1.327,30	0,27%
<i>Նավթ</i>	70,27	6,83%



2018թ. մարտի 21-ին տեղի ունեցավ ԱՄՆ ՖՊՀ հերթական նիստը և որոշվեց դրամավարկային քաղաքականության բազային տոկոսադրույքը բարձրացնել 25 բազիսային կետով՝ սահմանելով 1.5-1.75% միջակայք: ՖՊՀ կողմից հրապարակվեցին նաև ՀՆԱ և ՍԳԻ կանխատեսումները. 2018թ. ՀՆԱ աճի նախկին 2.5% աճի կանխատեսումը վերանայվել է դրական ուղղությամբ՝ բարձրացվելով մինչև 2.7%, իսկ ինֆլացիան կանխատեսումների համաձայն կկազմի 1.9%: Նշենք, որ 2017թ. 4-րդ քառորդում ՀՆԱ եռամսյակային (QoQ) աճը կազմել է 2.9% (չնայած, որ կանխատեսվում էր ընդամենը 2.7% աճ): Տնտեսական աճի տեմպերի արագացման, ինֆլացիայի՝ նպատակային մակարդակին մոտենալու և աշխատաշուկայի դրական տեղաշարժերի ֆոնին մինչ 2019թ. ՖՊՀ-ն նախատեսում է տոկոսադրույքի ևս 2-անգամյա բարձրացում:

EUR/USD զույգը մարտ ամսվա ընթացքում գրանցեց մոտ 1.1% աճ: Մարտի 8-ին կայացած նիստում ԵԿԲ-ն անփոփոխ թողեց դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքները՝ ավանդադրման տոկոսադրույք՝ -0.4%, վերաֆինանսավորման տոկոսադրույք՝ 0.0%: Նշենք, որ Եվրագոտում արդեն նկատվում է ինֆլացիայի տեմպերի որոշակի արագացում. մարտ ամսին ՍԳԻ տարեկան (YoY) աճը կազմել է 1.4%, ինչը վերջին 4 ամիսների ընթացքում ինդեքսի առաջին բարձրացումն է: Գործազրկության մակարդակը Եվրագոտում 2018թ. փետրվարյան տվյալի համաձայն հասել է ավելի քան ինը տարիների նվազագույն՝ 8.5% մակարդակին: Չնայած դեռևս անփոփոխ խթանող դրամավարկային քաղաքականությանը՝ ԵՄ երկրների տնտեսության տարբեր ոլորտներում դրական տեղաշարժերի պահպանումը նպաստում է եվրոյի դիրքերի ամրապնդմանը:



ԱՄՆ դոլարի թուլացման ֆոնին GBP/USD զույգը մարտ ամսվա ընթացքում աճեց ավելի քան 1.87%-ով: Ամսվա ընթացքում հրապարակված տվյալներն առավելապես Մեծ Բրիտանիայի վերամշակող արդյունաբերության ոլորտում փետրվար ամսին աճել է գործարար ակտիվությունը, մանրածախ առևտրի ծավալներն ամսական կտրվածքով աճել են 0.8%-ով (նախորդ ամսվա 0.2% անկումից հետո), իսկ տարեկան կտրվածքով՝ 1.5%-ով: Մարտի 22-ին կայացած նիստում Անգլիայի Բանկը որոշեց անփոփոխ թողնել ԴՎՔ տոկոսադրույքը՝ 0.5%, ինչն ավելի է մեծացնում առաջիկա նիստում ԴՎՔ խստացման սպասումները:



Չնայած ԱՄՆ դոլարի դիրքերի թուլացմանը և նավթի գների աճին՝ մարտ ամսվա ընթացքում ռուսական ռուբլին ԱՄՆ դոլարի նկատմամբ գրանցեց մոտ 1.5% անկում: Անկումը փոքր-ինչ զսպվեց հարկային ժամանակաշրջանի ընթացքում, երբ, որպես կանոն, ռուսաստանյան արտահանող կազմակերպությունների

կողմից գրանցվում է ազգային արժույթի նկատմամբ պահանջարկի աճ, սակայն Մեծ Բրիտանիայի հետ քաղաքական լարվածությունն առավել որոշիչ դեր խաղաց՝ հանգեցնելով USD/RUB զույգի աճին:

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱ

Մարտ ամսին գերադաքական ռիսկերի աճը բարենպաստ պայմաններ ստեղծեց առավել ապահով, ոչ ռիսկային ակտիվների՝ այդ թվում ոսկու համար: Ոսկու մեկ ունցիայի գինն ամսվա ընթացքում գերազանցեց 1355 ԱՄՆ դոլարը, սակայն ամսվա վերջում փոքր-ինչ նվազելով ամիսը փակեց ընդամենը մոտ 0.3% աճով: Ոսկու գնի աճին նպաստող հիմնական գործոններն էին ԱՄՆ-Չինաստան առևտրային

հարաբերությունների սրումը, դրա ֆոնին ստեղծված անորոշությունները, ԱՄՆ դոլարի դիրքերի թուլացումը, ոսկու խոշորագույն սպառողներից Հնդկաստանում ոսկու նկատմամբ պահանջարկի սեզոնային աճը: CFTC (The Commodity Futures Trading Commission's) տվյալներով մարտ ամսվա վերջին

շաբաթվա ընթացքում գրանցվեց ոսկու նկատմամբ զուտ սպեկուլյատիվ երկար դիրքերի կտրուկ աճ՝ 148.7 հազարից մինչև 203.4 հազար: Նույն ժամանակահատվածում աճ է գրանցել նաև նավթի նկատմամբ զուտ սպեկուլյատիվ երկար դիրքերի թիվը՝ ամսվա վերջում հասնելով 715.8 հազարի: Brent տեսակի նավթի մեկ բարելի գինը մարտ ամսվա ընթացքում գրանցել է մոտ 6.83% աճ՝ պայմանավորված ՕՊԵԿ-ի անդամ և այլ նավթ արդյունահանող երկրների միջև արդյունահանման ծավալների կրճատման համաձայնագրի երկարաձգման սպասումներով և ԱՄՆ դոլարի դիրքերի թուլացմամբ:

